

---

---

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԽՍՀՄ ՊԵՏԱԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
№ 531

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ  
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ  
ԿԱՐԳԻ ՄԱՅԻՆ

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՄՆ ԳՆՏԱԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
ԽՍՀՄ Ֆինտոպկամ Գ. ԳՐԻՆԿՈ  
1936 թ. 16 հունիսի

368.

Պատ. խմբագիր՝ Մ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ  
Թարգմանեց՝ Լ. Մ. ԱՎԱԳՅԱՆ  
Տեխ. ձեվ. յեվ սրբ. Ս. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

### Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԽՍՀՄ ՊԵՏԱՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ

№ 531

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ  
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ  
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

#### ԻՆՉՊԻՍԻ ԳՈՒՅԲ ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻ ԱՂԵՏՆԵՐԻՑ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

§ 1. Կամավոր գերկոպարային ապահովագրության կարգով կոլտնտեսություններում (գյուղատնտեսական կոմունաներում, գյուղատնտեսական արտելներում և միատեղ հող մշակող ընկերություններում), ձկնորսային կոլտնտեսություններում, ինչպես նաև տնայնա-արդյունաբերական սկզբնական կազմակերպություններում՝ գյուղերում, հաշմանդամների սկզբնական կազմակերպություններում՝ քաղաքներում և գյուղական վայրերում ապահովագրվում են՝

ա) շենքերը, ձեռնարկությունները, սարքավորումն ու ինվենտարը (բացի ձկնորսային գործիքներից)՝ կրակից, հեղեղումից, յերկրաշարժից, փրկումներից, սողումներից, փոթորիկներից, մրրկից, տառափից, կայծակահարությունից և շոգեկաթսանների պայթումից.

բ) ձկնորսային նավերը՝ ամեն տեսակի տարերային աղետներից, լողալու ժամանակ և նավահանգիստներում.

գ) հատուկ և տեխնիկական մշակույթների ցանքերը, ինչ-

պես նաև պտղատու և խաղողի այգիներին, մրգարաններին, բանջարանոցներին և բոստաններին բերքը—այնպիսի տարերային աղետներին, վորոնց պատճառած ֆլաններին համար ավյալ վայրերում և ավյալ մշակութի վերաբերմամբ պարտադիր ապահովագրութեան գծով Պետապի պատասխանատվութեանն և սահմանված:

Թանրություն.— Գերկոպարային կարգով կարելի չէ ապահովագրել կարտոֆիլը, ինչպես նաև այն բանջարանոցային և բոստանային մշակութիները, վորոնք գտնվում են սածիլանոցներում, պարնիկներում, ջերմոցներում և այդ մշակութիների սերմանոցները:

դ) Գյուղատնտեսական անասունները՝ մահացութեան դեպքերին, անասնաբուժի կարգադրութեամբ մորթելուց (անասունների վարակիչ հիվանդութեաններ կանխելու ու դրանց վերջ տալու նպատակով) և այն դեպքերին, յերբ անասունը մորթում և դժբախտ պատահարի հետևանքով կամ այնպիսի անբուժելի հիվանդութեան, վորը զրկում է նրան բոլոր տեսակի արտադրողականութեանից (բանելու, պարենային և ազնվացեղային):

Թանրություն.— Կոլտնտեսութեաններում և կոոպերատիվներում կամավոր գերկոպարային կարգով ապահովագրվող գյուղատնտեսական անասուններին վերաբերում են՝

ա) խոշոր յեղջուրավոր անասունները (վոչ ազնվացեղ)— 6 ամսական հասակին:

բ) խոշոր յեղջուրավոր անասունների ազնվացեղ մատուցող անասունները՝ 6 ամսականից մինչև 1 տարեկան հասակը:

գ) ձիերը (վոչ ազնվացեղ) 1 տար. հասակին:

դ) ազնվացեղ ձիերը՝ 6 ամսականից մինչև 2 տարեկան հասակը:

ե) ուղտերը, ավանակները, ազնվացեղ յեղջուրուները՝ 6 ամսական հասակին, իսկ մնացած (վոչ ազնվացեղ) ուղտերը, ավանակներն ու յեղջուրուները, ինչպես նաև ջորիները և ձիերը՝ 1 տար. հասակին:

զ) վոչխարները, այծերն ու խոզերը՝ 6 ամս. հասակին: Ազնվացեղ համարվում են այն դտարյուն և ազնվացած ցեղի անասունները, վորոնք ցուցակագրված են հոգային որդեգրների ցեղային մատյաններում:

§ 2. Կամավոր կարգով կոլտնտեսութեաններում և սեզոնական կոոպերատիվներում ապահովագրվում են մայր-ձագարները, ազնվացեղ թռչունները (հավերք, բադերն ու սագերը) և մեղուները (փեթակներում) տարերային աղետներին, հիվանդութեանների և դժբախտ դեպքերին հետևանքով տեղի ունեցած մահացութեանին:

Թանրություն.— Մայր-ձագարները, ազնվացեղ հավերք, բադերն ու սագերն ապահովագրվում են 6 ամսական հասակին:

§ 3. Կոլտնտեսականների (տնտեսութեան վոչ հանրայնացված մասը), բանվորների, ծառայողների, և կոոպերացված տնայնագործների մոտ ապահովագրվում են՝

ա) կամավոր գերկոպարային կարգով խոշոր յեղջուրավոր անասունները—6 ամսական հասակին, ինչպես նաև ձիերը, ուղտերը, ավանակները, ջորիներն այն վայրերում, վորտեղ գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրութեանը թույլ է տալիս կոլտնտեսականներին այդպիսի գյուղատնտեսական անասուններ ունենալ—1 տարեկան հասակին:

բ) կամավոր կարգով վոչխարները, այծերն ու խոզերը—6 ամսական հասակին:

§ 4. Աշխատավոր մենատնտեսութեաններում, վոչ կոոպերացված տնայնագործների, արհեստավորների և այլ աշխատավորների մոտ ապահովագրվում են՝

ա) կամավոր գերկոպարային կարգով խոշոր յեղջուրավոր անասունները 6 ամսականից մինչև 10 տարեկան հասակը, ինչպես նաև ձիերը, ուղտերը, ավանակները և ջորիները—1 տար. մինչև 12 տարեկան հասակը:

բ) կամավոր կարգով վոչխարները, այծերն ու խոզերը 6 ամսական հասակին:

§ 5. Կոլտնտեսականների և մենատնտեսների գյուղատնտեսական անասուններն ապահովագրվում են մահացութեան դեպքերին կամ այս հրահանգի § 1 «դ» կետում մատնանշված պատճառներով մորթելուց:

§ 6. Կամավոր կարգով կարելի չէ ապահովագրել՝

ա) կոլտնտեսութեան այն շենքերը, ձեռնարկութեանները, սարքավորումը, ձկնորսային նավերն ու ինվենտարը, վորոնք



11-28567911

ապահովագրվել են պարտադիր կոպարային կարգով, կամ այդ գույքի մի մասը.

բ) կոտնտեսութունները և սկզբնական կոոպերատիվները հատուկ և տեխնիկական մշակույթների ցանքերը, պտղատու և խաղողի այգիների, բանջարանոցների և բոստանների բերքն այն դեպքերում, յեթե ապահովագրված և տվյալ մշակույթով դբադեցրած ամբողջ տարածութունը.

գ) տվյալ տնտեսութւյան ունեցած բոլոր գյուղատնտեսական անասունները կամ տվյալ տիպի կամ սեռի անասունները, որինակ՝ բոլոր ձիերը կամ միայն. բոլոր զամբիկները և այլն, կարելի յի ապահովագրել նաև առանձին անասուններ, յեթե նրանք ունեն այնպիսի հատկանիշներ, վորոնցով կարելի յի վորոշել, վոր իրոք ապահովագրված անասունն և սատկել.

դ) բոլոր մայր-ճագարները.

ե) բոլոր ազնվացեղ թռչունները կամ նրանց առանձին տեսակները, որինակ՝ հավերը, բադերը.

զ) մեղուները բոլոր փեթակները:

§ 7. Այն դեպքերում, յերբ մի վորեն գյուղատնտեսական մշակույթ (բացի բոլոր տարերային աղետներից ապահովագրվող մշակույթներից) տվյալ վայրում ապահովագրված և համարվում պարտադիր կոպարային ապահովագրութւյան մի քանի տեսակներով, այդպիսին, ապահովագրվողի ցանկութւյամբ, կարելի յի կամավոր կարգով ապահովագրել կամ պատասխանատութւյան բոլոր տեսակներով կամ ուզած տեսակով:

§ 8. Հատուկ և տեխնիկական, բանջարանոցային, բոստանային մշակույթներն ապահովագրվում են ընթացիկ տարվա համար ըստ պլանային տարածութւյան, պտղատու և խաղողի այգիների և մրգարանների բերքն ապահովագրվում և տնտեսութւյան պտղաբեր տարածութւյան համեմատ:

§ 9. Գյուղատնտեսական անասունների, ճագարների, թռչունների և մեղուների կամավոր ապահովագրութւյունը կատարվում և ապահովագրութւյուն կնքելու պահին տնտեսութւյան ունեցած որչեպտների քանակութւյամբ:

§ 10. Յեթե կամավոր ապահովագրութւյուն կնքուց հետո և մինչև ապահովագրութւյան ժամկետի լրանալը տնտեսութւյունը ձեռք և բերում գյուղատնտեսական նոր անասուններ և թռչուններ նույն տեսակի (կամ սեռի), ինչ վոր ապահովագրվածներն են, կամ մեղուների նոր ընտանիքներ, ապա զրանց կարելի յի

լրացուցիչ կերպով ապահովագրել տնտեսութւյան մեջ մտնելու պահից:

Յեթե տնտեսութւյան մեջ դերկոպարային կարգով ապահովագրվում են վոչ տվյալ տեսակի բոլոր անասունները, այլ նրանցից մի քանիսը (տես այս հրահանգի § 6 «բ» կետը), ապա լրացուցիչ կերպով կարող են ապահովագրվել տնտեսութւյան մեջ մտած անասուններից այնպիսիները, վորոնք ստույգ հատկանիշներ ունեն և սատկելու դեպքում կարելի յի վորոշել, վոր սատկել և ապահովագրված անասունը:

§ 11. Կամավոր կարգով կարելի յի ապահովագրել միմիայն առողջ և համապատասխան խնամքով և պահպանութւյամբ ապահոված գյուղատնտեսական անասուններ, թռչուններ ու մեղուներ: Մեղուները (ընտանիքները) բացի այդ, պետք և ունենան մայրեր և անհրաժեշտ կերի պաշար:

§ 12. Յեթե ապահովագրվելիք տվյալ տեսակի անասունների մեջ կան հիվանդ կամ հյուճված անասուններ, ապա դրանք չեն ապահովագրվում: Այդ անասուններին տնտեսութւյունը կարող և լրացուցիչ կերպով ապահովագրել առողջանալուց կամ պատշաճ տեսք ընդունելուց հետո: Գյուղատնտեսական մատղաշ անասուններին, վորոնք ապահովագրական հասակի յեն հասել այն ժամանակաշրջանում, վորում տվյալ տեսակի գյուղատնտեսական անասունների ապահովագրութւյուն և կնքված, անասնատիրոջ ցանկութւյամբ կարելի յի լրացուցիչ կերպով ապահովագրել մինչև հիմնական ապահովագրութւյան ժամկետը լրանալը:

§ 13. Այն ձիերը, վորոնք մալիկինյան տնտեսութւյուններում են գտնվում չեն ապահովագրվում: Իսկ այն ձիերը, վորոնք սպասարկում են այդ տնտեսութւյուններին (ապահովագրվում են պարտադիր կերպով), յեթե առողջ են, կարող են ապահովագրվել գերկոպարային ապահովագրութւյամբ սովորական կարգով:

## ԻՆՉԴԻՍԻ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ Ե ԱՊԱՅՈՎԱԳՐՎՈՒՄ ԳՈՒՅՔԸ

§ 14. Կոտնտեսութւյուններում և սկզբնական կոոպերատիվներում գույքը կարելի յի ապահովագրել ուզած գումարով, ապահովագրվողի ցանկութւյամբ, բայց վոչ ավելի քան՝

ա) շենքերի, ձեռնարկութւյունների, սարքավորման, ձկնորսային նավերի և ինվենտարի վերաբերմամբ, վոր ապահովագր-

վում ե պարտադիր կոպարային կարգով, այն տարբերութիւնը, վոր գոյութիւն ունի ինվենտար զնահատման և իսկական արժեքի միջև ապահովագրական որգանների զնահատութիւնը.

բ) գյուղատնտեսական մշակութիւնների վերաբերմամբ՝ այն տարբերութիւնը, վորը գոյութիւն ունի պարտադիր կոպարային ապահովագրութիւն կայուն նորմաների և բերքի լրիվ արժեքի (մթերման գներով) միջև, իսկ այն մշակութիւնների վերաբերմամբ, վորոնց համար մթերման գներ չեն սահմանված՝ բերքի լրիվ արժեքի, կոնվինցիոն գներով հաշված.

գ) գյուղատնտեսական անասունների վերաբերմամբ՝ այն տարբերութիւնը, վորը գոյութիւն ունի պարտադիր կոպարային ապահովագրութիւնը սահմանված կայուն նորմաների և անասունների լրիվ արժեքի միջև, վորոշված ապահովագրական որգանների կողմից կոլտնտեսային շուկայի գների հիման վրա.

դ) մայր-ճագարների, աղնվացեղ թռչունների և մեղուների վերաբերմամբ՝ կամավոր ապահովագրութիւնն ապատասխանատուութիւնն այն նորմաները, վորոնք սահմանված են դաշնակից հանրապետութիւնների Ժողկոմխորհների կողմից ԽՍՀՄ Պետապի համաձայնութիւնը:

§ 15. Կոլտնտեսականների և մենատնտեսների մոտ գյուղատնտեսական անասուններ կարող են ապահովագրվել ուղած դումարով, ապահովագրվողի ցանկութիւնը, բայց այդ դումարը չի կարող ավելի լինել քան՝

ա) խոշոր յեղջուրավոր անասունների, ձիերի, ուղտերի, ավանակների, ջորիները վերաբերմամբ—այն տարբերութիւնը, վորը գոյութիւն ունի պարտադիր կոպարային ապահովագրութիւնն կայուն նորմաների և անասունների՝ կոնվինցիոն կամ պետական գնման գների հիման վրա սահմանված, արժեքի միջև.

բ) վոչխարների, այծերի և խոզերի վերաբերմամբ — այն նորմաները, վորոնք սահմանված են դաշնակից հանրապետութիւնների Ժողկոմխորհների կողմից ԽՍՀՄ Պետապի համաձայնութիւնը:

### ԻՆՉՊԻՍԻ ԺԱՄԿԵՏՈՎ Ե ԱՊԱՆՈՎԱԳՐՎՈՒՄ ԳՈՒՅՔԸ ԿԱՄՎՈՐ ԿԱՐԳՈՎ

§ 16. Գույքի (բացի գյուղատնտեսական մշակութիւնների ցանքերից) կամավոր ապահովագրութիւնն անց է կացվում տարվա ուղած ժամանակ և կնքվում է մեկ տարով, ընդվորում,

Պետապի պատասխանատուութիւնն սկսվում է առաջին ժամկետի վճարումը կատարելուց անմիջապէս հետո և վերջում հերթական վճարումը ժամանակին չկատարելու դեպքում:

Մանրութիւնը.— Խոշոր յեղջուրավոր մատղաշ անասունների՝ 6 ամսականից մինչև 1 տարեկան հասակը, ձիերը, ուղտերը, ավանակները, ջորիները և յեղջուրները— 1 տարեկանից մինչև 2 տարեկան հասակը (իսկ աղնվացեղ ձիերը, ուղտերը, ավանակներն ու յեղջուրները— 6 ամսական հասակից) կարող են ապահովագրվել մեկ տարուց ավելի պահաս ժամանակով, այսինքն, մինչև այն ժամանակ, յերբ նրանք կհասնեն ապահովագրական հասակին և կապահովվեն պատասխանատուութիւնն լրիվ նորմայով պարտադիր կոպարային ապահովագրութիւնն կարգով (խոշոր յեղջուրավոր անասունների համար— 1 տարեկան, իսկ ձիերի, ուղտերի, ավանակների, ջորիների և յեղջուրների համար 2 ա. հասակ):

§ 17. Գյուղատնտեսական մշակութիւններն ապահովագրվում են մեկ վեզիտացիոն շրջանի համար, ընդվորում, Պետապի պատասխանատուութիւնն սկսվում է՝

ա) ցանովի մշակութիւնների վերաբերմամբ— ծլելու օրվանից.  
բ) տունկային մշակութիւնների վերաբերմամբ, վոր զարգանում են սածիլներով, օրինակ, ծխախոտը, կողամբը և այլն— տնկելու պահից.  
գ) պտղատու այգիների և մրգարանների վերաբերմամբ— ծաղկելու (բողբոջներ գոյանալու) պահից, իսկ խաղողի այգիների վերաբերմամբ— փնջեր տալու պահից (СОЦВЕТИЯ):

Պետապի պատասխանատուութիւնը գյուղատնտեսական մշակութիւնների վերաբերմամբ վերջանում է բերքը հավաքելու պահից, այսինքն, ցանքը հնձելու, պտուղներ հավաքելու և այլն:

§ 18. Գյուղատնտեսական մշակութիւններն ապահովագրութիւնն ընդունվում են մինչև ցանքի վերջանալը, բայց վճ ուշ քան այն ժամկետները, վոր սահմանված են հանրապետութիւնների կառավարութիւնների կամ յերկրային (մարզային) գործադիր կոմիտեների կողմից սվյալ մշակութի ցանքի համար, իսկ պտղատու այգիների, մրգարանների և խաղողի այգիների վերաբերմամբ՝ մինչև ծաղկման սկիզբը կամ փնջեր տալը:

Գյուղատնտեսական մշակույթները կարկտից, տարափից և փոթարկից կարելի չն ապահովագրել տարվա ուղած ժամանակ, ընդվորում, Պետապի պատասխանատվությունն սկսվում է վճարումներ կատարելուց 24 ժամ հետո:

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

§ 19. Գերկուպարային ապահովագրության վճարումները գանձվում են պարտադիր կուպարային ապահովագրության տարիֆային դրույթներով, բացառությամբ հետևյալ իջեցրած տարիֆային դրույթների՝

#### 1) ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՍԿՋԲԵԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Սոճոր յեղջուրավոր անասուններ ապահովագրելու դեպքում . . . . . 2 ուրբ.	} Ապահովագրական գումարի 100 ուրբլուց:
բ) Վոչխարներ, այծեր . . . . . 3—20	
գ) Սոզեր . . . . . 3—75	

#### 2) ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԽԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵՎ ՍԿՋԲԵԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՆԳԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սոճոր յեղջուրավոր անասուններ ապահովագրելու դեպքում—3 ուրբլի, ապահովագրական գումարի 100 ուրբլուց:

§ 20. Կանեփը և կապտաղ յերաշտից ապահովագրելու համար ապահովագրական վճարումներ գանձվում են 2 ու. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ու.:

§ 21. Հարավային կանեփը բոլոր տեսակի տարերային աղետներից, փասատուներից և հիվանդություններից ապահովագրելու համար ապահովագրական վճարումներ գանձվում են 3—60, իսկ վորսյանկայի ապահովագրության համար 4 ու. 60 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ու.:

§ 22. Մալր-ճագարները, ազնվացեղ թռչուններն ու մեղուները կուտնտեսություններում, ինչպես նաև վոչխարները, այծերն ու խոզերը կուտնտեսականների և մենատնտեսների մոտ ապահովագրվում են ապահովագրական վճարումների այն տարիֆային դրույթներով, վորոնք սահմանված են զաշնակից հանրա-

պետությունների Ժողկոմխորհների կողմից ԽՍՀՄ Պետապի համաձայնությամբ:

§ 23. Կուտնտեսությունների և սկզբնական կուպարայինների շենքերը, ձեռնարկությունները, սարքավորումը, ինվենտարն ու ձկնորսային նավերը կամավոր գերկուպարային կարգով ապահովագրելու համար ապահովագրական վճարումներ վորոշվում են ապահովագրական գումարից այն տարբերության սահմաններում, վոր գոյություն ունի գույքի ինվենտար գնահատման և խկական արժեքի (ապահովագրական որգանների գնահատությամբ) միջև:

Որինակ՝ Կալինյան մարզի, Բեժեցկի շրջանի կուտնտեսությունը ցանկություն է հայտնել իր բոլոր շենքերը, ինչպես նաև սարքավորումն ապահովագրել մինչև լրիվ արժեքը: Այդ շենքերն ու սարքավորումը պարտադիր կուպարային կարգով ապահովագրված են ինվենտար գնահատմամբ 40000 ու. գումարով: Իսկ ապահովագրական որգանների գնահատմամբ շենքերի և սարքավորման արժեքը վորոշված է 65000 ու.: Այս դեպքում կուտնտեսությունը կարող է լրացուցիչ կերպով ապահովագրել շենքերն ու սարքավորումը կամավոր գերկուպարային կարգով իր ուղած գումարով, բայց վոչ ալեյի քան 25000 ու. (65000—40000): Պարտադիր կուպարային ապահովագրության ապահովագրական վճարումների դրույթը Բեժեցկի շրջանում սահմանված է 1 ու. 20 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրբ. (կամ 1,2%):

Յեթե շենքն ու սարքավորումն ապահովագրվում են մինչև լրիվ արժեքը, այսինքն, 25000 ու., ապա կամավոր ապահովագրության ապահովագրական վճարումները, վոր կուպարային ապահովագրության տարիֆով են հաշվված, կկազմեն 25000 ու. 1,2%—ը, կամ 300 ուրբ.:

§ 24. Կամավոր գերկուպարային ապահովագրության վճարումները գյուղատնտեսական մշակույթներ ապահովագրելու համար հաշվարկվում են ապահովագրական գումարի այն տարբերության սահմաններում, վորը գոյություն ունի պարտադիր կուպարային ապահովագրության կայուն նորմայի և բերքի արժեքի (մթերման կամ կոնվենցիոն գներով) միջև:

Որինակ՝ բամբակի ցանքերը պարտադիր կուպարային կարգով ապահովագրված են կայուն նորմայով 200 ու. մեկ հեկտարը:

կոլտնտեսութիւնը ցանկութիւնն և հայտնել իր ցանքերը լրացուցիչ կերպով ապահովագրելու մինչև բերքի լրիվ արժեքը և այդ արժեքն ապահովագրական տեսուչը վորոշել և 600 ուրբ. մեկ հեկտարից: Այս դեպքում բաժնակի ցանքերը կարելի չե կամավոր գերկոպարային կարգով ապահովագրել 400 ո. (600—200) սահմաններում մեկ հեկտարը:

Բամբակի կոպարային ապահովագրութիւնն ապահովագրական վճարումների գրույքը սահմանված և 2 ո. 30 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրբուց:

Յեթե բամբակն ապահովագրվում և 400 ո. մեկ հեկտ., ապա կոպարային ապահովագրութիւնն գրույքներով վորոշված ապահովագրական վճարումները կկազմեն 400 ուրբու 2,3% կամ 9 ո. 20 կ. ցանքի յուրաքանչյուր հեկտարին:

§ 25. Ապահովագրական վճարումներ գյուղատնտեսական մշակույթների համար վորոշվում են և գանձվում պլանային տարածութիւնից: Յեթե ապահովագրվողը պլանային տարածութիւնից ավելի քիչ և ցանում, ապա ավելորդ ստացված ապահովագրական վճարումները տեսչութիւնն անմիջապէս վերադարձնում և ապահովագրվողին կամ հաշվում յերկրորդ վճարման դրամաց: Յեթե փաստորեն ցանված տարածութիւնն ապահովագրվում և ավելի չե լինում, ապա տեսչութիւնն, ապահովագրվողի ցանկութիւնը, ապահովագրական վճարումների վերահաշվարկ և կատարում փաստորեն ցանված տարածութիւնն համեմատ: Դրա համար ապահովագրվողը պարտավոր և ցանքն ավարտելուց 10 օրվա ընթացքում հայտնել շրջանային ապահովագրական տեսչութիւնը վերահաշվարկ կատարելու ցանկութիւնն և ապահովագրված մշակույթի փաստորեն ցանված տարածութիւնն մասին:

Ապահովագրվողի հայտարարութիւնն ստանալուց հետո տեսուչը պարտավոր և յերեք օրվա ընթացքում ապահովագրական վճարումների վերահաշվարկ կատարել, իսկ ապահովագրվողը պարտավոր և վճարել իրենից հասանելիք լրացուցիչ վճարումները շրջանային ապահովագրական տեսուչութիւնից վերահաշվարկն ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

Յեթե ապահովագրվողը, վորը գերակատարել և ապահովագրված մշակույթի ցանքի պլանը, ցանկութիւնն չի հայտնում վերահաշվարկ կատարելու մասին և չի մուծում լրացուցիչ վճարումները, ապա մեկ հեկտարի ապահովագրական գումարի չափը

պահպանեցվում և և վորոշվում ընդհանուր ապահովագրական գումարը փաստորեն ցանված տարածութիւնն վրա բաժանելու միջոցով:

§ 26. Կոլտնտեսութիւնների և սկզբնական կոպերատիւների գյուղատնտեսական անասունների կամավոր գերակոպարային ապահովագրութիւնն ապահովագրական վճարումները հաշվարկվում են ապահովագրական գումարից, վորը ստացվում և պարտագիր կոպարային ապահովագրութիւնն կայուն նորմաների և անասունների իսկական արժեքի (ապահովագրական որգանների կողմից սահմանված) միջև յեղած տարբերութիւնից:

Որինակ.— Իվանովյան մարզի, Գալիչի շրջանի կոլտնտեսութիւնը ցանկութիւնն և հայտնել իր 50 ձիւն ապահովագրելու գերկոպարային կարգով: Ձիերն ապահովագրված են կոպարային կարգով կայուն նորմաներով՝ 170 ո. յուրաքանչյուրը, կամ 8500 ո. ընդհանուր գումարով: Ապահովագրական որգանները՝ յուրաքանչյուր ձիու զնահատութիւնը բոլոր ձիերի իսկական արժեքը վորոշված և 45000 ո.: Այս դեպքում ձիերը կարող են գերկոպարային կարգով ապահովագրվել ուղած գումարով, բայց վոչ ավելի քան 36500 ուրբ. (45000 ո.—8500 ո.). ձիերի կոպարային ապահովագրութիւնն ապահովագրական վճարումների գրույքը Գալիչի շրջանում սահմանված և 4 ո. 90 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրբուց: Յեթե ձիերն ապահովագրվում են 36500 ո., ապա կոպարային ապահովագրութիւնն տարիքներով հաշված ապահովագրական վճարումները կկազմեն 36500 ուրբուց 4,9%-ով կամ 1788 ո.:

Նույն կարգով, բայց համապատասխան տարիքային գրույքներով և համապատասխան ապահովագրական գումարներով հաշվարկվում են կոլտնտեսութիւններում խոշոր յեղջուրավոր անասունների, վոչխարների, այծերի և խոզերի գերկոպարային ապահովագրութիւնն ապահովագրական վճարումները:

§ 27. Կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսութիւններին պատկանող խոշոր յեղջուրավոր անասունների, ձիերի, ուղտերի, ավանակների, ջորիների և յեղջուրուների կամավոր գերկոպարային ապահովագրութիւնն ապահովագրական վճարումները հաշվարկվում են ապահովագրական գումարից, վորը ստացվում և պարտագիր կոպարային ապահովագրութիւնն կայուն նորմաների և անասունների արժեքի (կոնվենցիոն և զնման զնիբով) միջև յեղած տարբերութիւնից:

Ռերնակ 1. Իվանովյան մարզի Իլյինսկի շրջանի կոլտնտեսականն ապահովագրում է իր կովը կամավոր կարգով: Պարտադիր ապահովագրութեան ապահովութեան նորման՝ 135 ուրլի յե: Կովի կոնվենցիոն արժեքը՝ 600 ու: Կամավոր գերկոպարային կարգով կովը կարող է ապահովագրվել ուղած գումարով, բայց վոչ ավելի քան 465 ու. (600—135): Խոշոր յեղջուրավոր անասունները պարտադիր կոպարային ապահովագրութեան ապահովագրական վճարումների դրույքը կոլտնտեսականների տնտեսութուններում սահմանված է 3 ու. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրլուց:

Յենթագրենք, թե կոլտնտեսականը կամենում է կովը լրացուցիչ կերպով ապահովագրել 400 ու: Այս դեպքում ապահովագրական վճարումը կովի համար պարտադիր ապահովագրութեան դրույքներով կկազմի 400 ու. 3%-ը, կամ 12 ուրլ:

Ռերնակ 2. Նույն շրջանի մենատնտեսն կամավոր կարգով ապահովագրում է իր կովը: Պարտադիր կարգով կովն ապահովագրված է 130 ու. նրա կոնվենցիոն արժեքն է 600 ու: Լրացուցիչ կերպով կարելի յե ապահովագրել 470 ու. գումարով (600—130):

Յենթագրենք, թե մենատնտեսը կամենում է լրացուցիչ կերպով ապահովագրել իր կովը 400 ու: Պարտադիր ապահովագրութեան տարեֆային դրույք սահմանված է 5 ու. 10 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրլուց: Վճարումների այդ դրույքը կիրառվում է նաև կամավոր գերկոպարային ապահովագրութեան վերաբերմամբ:

Այստեղից, կամավոր ապահովագրութեան ապահովագրական վճարումը կովի համար կկազմի 400 ու. 5,1%-ը, կամ 20 ու. 40 կ.:

§ 28. Մայր-ձագարները, աղնվացեղ թռչունների և մեղուների կամավոր ապահովագրութունը կոլտնտեսութուններում, ինչպես նաև վոչխարներինը, այծերինը և խոզերինը կոլտնտեսականների և մենատնտեսների մոտ վորոշվում է ապահովագրական գումարից այն նորմաների սահմաններում, վոր վորոշում են գաշնակից հանրապետութունների ժողկոմխորհները ևՍՀՄ Պետապի համաձայնությամբ:

Ռերնակ 1. Ուղբ. ՍՍՀ կոլտնտեսութունը ցանկութուն է հայտնել ապահովագրելու իր 120 փեթակները: Մեղուների կա

մավոր ապահովագրութեան ապահովութեան նորման սահմանված է Ուղբեկ. ՍՍՀ ժողկոմխորհի կողմից 40 ու. մեկ փեթակի համար:

Մեղուները կարող են ապահովագրվել ուղած գումարով, բայց վոչ ավելի քան 4800 ու. (40 × 120): Յենթագրենք, թե ապահովագրական վճարումների դրույքը սահմանված է Ուղբ. ՍՍՀ ժողկոմխորհի կողմից 6 ուրլ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրլուց:

Յենթե կոլտնտեսութունն ապահովագրում է մեղուներին պատասխանատվութեան լրիվ նորմայի չափով, այսինքն, ավյալ դեպքում, 4800 ու., ապա այդ տարեֆային դրույքով վորոշված ապահովագրական վճարումը կկազմի 288 ուրլի:

Ռերնակ 2. Յենթագրենք, թե կոլտնտեսականների վոչխարների կամավոր ապահովագրութեան պատասխանատվութեան նորման սահմանված է Ուղբ. ՍՍՀ կողմից 100 ու. մեկ գլխին, իսկ ապահովագրական վճարումների դրույքը 4 ու. 80 կ. ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ուրլուց:

Այս դեպքում մեկ վոչխարը կամավոր կարգով 100 ու. ապահովագրելիս կոլտնտեսականը պետք է վճարի 4 ու. 80 կ.:

§ 29. Կամավոր ապահովագրութուն կնքելուց հետո անասունների, թռչունների և մեղուների (նոր ձևք բերված և առողջացած) համար ապահովագրական վճարումներ գանձվում են այն ժամանակի համեմատ, վորը մնացել է մինչև տնտեսութեան մյուս ըոլոր անասունների, թռչունների և մեղուների ապահովագրութեան ժամկետը լրանալը, ավյալ տեսակի ապահովագրութեան համար սահմանված տարեֆի  $\frac{1}{12}$ -ի հաշվով ամսական: Վոչ լրիվ ամիսները համարվում են վորպես լրիվ ամիսներ:

Մանրորայուն.—Նույն հիմունքներով հաշվարկվում են նաև 6 ամսականից 1 տարեկան հասակ ունեցող խոշոր յեղջուրավոր անասունների ցեղական մատղաշների և մեկ տարեկանից մինչև յերկու տարեկան ձիերի, ուղտերի, ավանակների ու յեղջիւրուների ապահովագրական վճարումները:

Ռերնակ՝ Կոլտնտեսութունը սեպտեմբերի 1-ին գերկոպարային կարգով ապահովագրել է իր 70 խոզը: Փետրվարի 14-ին տնտեսութեան մեջ ընդունվել են նոր 5 խոզ: Այդ խոզերը նույն-



պէս կարող են ապահովագրվել, ընդվորում, ապահովագրական վճարումներ նրանց համար գանձվում են միմիայն այն ժամանակի համար, վորը մնացել է մինչև ապահովագրութայն վերջը, այսինքն, մինչև սեպտեմբերի 1-ը, կամ 7 ամսվա համար: Դրա համեմատ վճարումների չափը վորոշվում է տարեկան վճարման 12-ի չափով:

### Ա Ր Տ Ո Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

§ 30. Արտոնութայններ և զեղչեր կամավոր գերկոպարային ապահովագրութայն գծով արվում են նույն հիմունքներով, նույն չափերով և նույն որեկտների համար, ինչ վոր պարտադիր կոպարային ապահովագրութայն գծով, սակայն, այն հաշվով, վոր արտոնութայնների և զեղչերի ընդհանուր գումարը տնտեսութայնից հասանելիք, կամավոր ապահովագրութայն տարիքներով հաշված, վճարումներ 50%-ից ավելի չլինի, ընդվորում, այդ զեղչերը արվում են անկախ այս հրահանգի § 19-ում մատնանշված տարիքային դրույքների իջեցումից:

Որինակ՝ Կոլտնտեսութայնը գերկոպարային կարգով ապահովագրում է իր կաթնա-ապրանքային ֆերմայի 50 կովը 25000 ուրբ. գումարով: Յնեթադրենք, թե գերկոպարային ապահովագրութայն տարիքներով հաշված ապահովագրական վճարումը կազմել է 500 ու.: Կոլտնտեսութայնը պարտադիր ապահովագրութայն գծով զեղչ է արված 35% (20% ֆերմայում գտնվող անասունների համար և 15% խոշոր յեղջուրավոր անասունների պահպանման և զարգացման գործում ունեցած լավագույն ցուցանիշների համար):

Այդ նույն 35%-ի զեղչը արվում է գերկոպարային ապահովագրութայն գծով, այսինքն, 175 ու. գումարով (500 ուրբուց 35%-ը):

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

§ 31. Կամավոր ապահովագրութայն ապահովագրական վճարումներն ապահովագրվողները մուծում են յերկու ժամկետով, հավասար մասերով, այսինքն՝ ապահովագրական վճարումների ընդհանուր գումարի առաջին 50% պետք է մուծել վոչ ուշ քան շրջանային ապահովագրական տեսչութայնից ապահովագրու-

թյուն կնքելու մասին փաստաթուղթ (ապահովագրական հայտարարութայն) ստանալուց 10 օրվա ընթացքում: Վճարման մնացած 50%, բացի ցանքեր ապահովագրելու դեպքերից, պետք է մուծել առաջին մուծանքից 2 ամիս հետո:

Ցանքերի ապահովագրութայն գծով ապվճարի հետաձգումը (րասրոչկա) թույլատրվում է այն դեպքերում միայն, յեթե ապահովագրութայնը կնքված է վոչ ուշ, քան ցանք սկսելու սահմանված ժամկետներից 2 ամիս առաջ:

Յեթե դյուղատնտեսական մշակույթների ապահովագրութայնը կարկտից, տարափից, վոթորկից և կրակից (չհնձված մշակույթի) կնքվում է ցանքից հետո, ապա ապահովագրական վճարումների ամբողջ գումարը պետք է մուծվի ապահովագրութայն կնքելու հետ միաժամանակ:

§ 32. Յեթե ապահովագրվողը սահմանված 10 օրվա ժամկետում չի կատարում առաջին մուծանքը, ապա ապահովագրութայնը համարվում է չկայացած:

§ 33. Յեթե ապահովագրվողը յերկրորդ ապահովագրական վճարումը ժամանակին չի կատարում, ապա ապահովագրութայնը վերջանում է և Պետապը վոչ մի պատասխանատվութայն ապահովագրված գույքի փչացման համար չի կրում, իսկ կատարված ապահովագրական վճարումները չեն վերադարձվում:

§ 34. Ապահովագրական վճարման առաջին մուծումը կատարելուց հետո, բայց մինչև վճարման յերկրորդ ժամկետը լրանալը, գույք փչանալու դեպքում, ապահովագրական վարձատրութայնից պահվում է ապահովագրվողից հասանելիք ավյալ ապահովագրութայն վճարումների գումարը կամ դրա մի մասը (նայած ապահովագրական վարձատրութայն չափին):

### ՎՈՐ ԴԵՊԵՐՈՒՄ ԴԵՏԱԴԸ ՉԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԱՄՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 35. Պետապը չի հատուցում կամավոր ապահովագրութայն ֆնաններն այն բոլոր դեպքերում, վորի համար ապահովագրվողը զրկվում է պարտադիր կոպարային ապահովագրութայն ապահովագրական վարձատրութայն ստանալու իրավունքից: Բացի այդ, ֆնանները չեն հատուցվում, յեթե ապահովագրվողը սահմանված ժամկետում չի մուծում իրենից հասանելիք կամավոր ապահովագրութայն վճարումները:

11-285829

§ 36. Յեթե կամավոր կարգով ապահովագրված գյուղատնտեսական անասունը տվյալ տնտեսութունից դուրս և գալիս, ապա պատասխանատվութունն այդ անասունի համար կամավոր ապահովագրության գծով վերջանում և և մուծված վճարումները չեն վերադարձվում:

Ծանոթութիւն.—Այն դեպքերում, յերբ տնտեսության մեջ ապահովագրվում են բոլոր անասունները կամ տվյալ տեսակի անասուններ միայն (որինակ, բոլոր խոշոր յեղձուրավոր անասունները կամ բոլոր ձիերը) և յուրաքանչյուր անասունը նույն ապահովագրական գումարով ու տնտեսութունը դուրս յեկած անասունների փոխարեն ձեռք և բերում նույն տեսակի նոր, դուրս յեկածից ավելի քիչ արժեք ունեցող, անասուններ, ապա նման անասուններն սկզբում ապահովագրված անասունների ընդհանուր քանակի սահմաններում համարվում են ապահովագրված առանց լրացուցիչ ապահովագրական վճարումներ կատարելու և նույն գումարով յուրաքանչյուրը: Իսկ յեթե տնտեսության մեջ անասուններն ապահովագրված են տարբեր գումարներով, ապա դուրս յեկած անասունների պատասխանատվութունը կարելի յե փոխադրել նույն արժեք ունեցող անասունների վրա այն դեպքում, յեթե նրանց արժեքը նոր ձեռք բերված անասունների արժեքից ավելի ցածր չե, հակառակ դեպքում պատասխանատվութուն պետք և սահմանել վոչ ավելի քան նոր ձեռք բերված անասունների արժեքը: Իսկ յեթե նոր ձեռք բերված անասունների արժեքը դուրս յեկածների արժեքից ավելի բարձր և, ապա ապահովագրական գումարը նրանց համար կարելի յե բարձրացնել և համապատասխանորեն պետք և ապահովագրական վճարի վերահաշվարկ կատարել:

### ԳՈՒՅՔԸ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԳՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 37. Վորպեսզի ապահովագրվողը (կոլտնտեսութունը, կոլտնտեսականը, մենատնտեսը), իր գույքն ապահովագրի կամավոր կարգով, նա պետք և հայտնի այդ մասին շրջանային ա-

պահովագրական տեսչությանն անմիջաբար կամ գյուղխորհրդի միջոցով, ինչպես նաև տվյալ վայրում ապահովագրութուն կնքելու համար լիազորված անձանց միջոցով:

§ 38. Գույքը կամավոր ապահովագրության ընդունում են շրջանային (քաղաքային) ապահովագրական տեսուչները, ինչպես նաև գյուղխորհուրդները, անասնաբուժերը, գյուղատնտեսները և ապահովագրութունների ընդունելու լիազորված այլ անձինք, ապահովագրվող գույքը զննելուց և գնահատելուց հետո:

Ծանոթութիւն.—Գյուղատնտեսական մշակութիւններն ապահովագրության ընդունվում են առանց զննության:

§ 39. Գյուղատնտեսական անասուններ զննում և գնահատում և շրջանային ապահովագրական տեսուչը մասնագետների՝ անասնաբուժերի (բուժակների), զոոտեխնիկների կամ գյուղատնտեսների պարտադիր մասնակցութեամբ:

Ծանոթութիւն.—1. Այն վայրերում, վորտեղ անասնաբուժական-զոո-ագրո-անձնակազմ չկա կամ տեղական պայմաններում այդ անձնակազմին ապահովագրվելիք անասունների զննության գործին մասնակից անելը շատ դժվար և, թույլատրվում և ապահովագրական տեսչին գյուղատնտեսական անասունների զննութուն և գնահատում կատարել գյուղական ապահովագրական հանձնաժողովների հետ միասին, յեթե յուրաքանչյուր անասուն գերիտպարային կարգով ապահովագրվում և վոչ ավելի բարձր քան կոպարային ապահովագրության ապահովագրական նորմայի գումարի յեռապատիկ չափով:

Ծանոթութիւն.—2. Անասունների զննությանն ու գնահատմանը չեն կարող մասնակցել այն կոլտնտեսության (կոոպերատիվի) մասնագետները, վորի գույքը ներկայացված և ապահովագրելու համար:

§ 40. Ապահովագրվելիք որչեկանների զննութունը պետք և կատարել առանձին խնամքով, վորպեսզի ապահովագրության շրջուններ թույլ, հիւլանդ ու կանոնավոր խնամքով և պահպանութեամբ չապահովված որչեկաններ, ինչպես նաև գույքն ապահովագրության շրջուններ այնպիսի գնահատմամբ, վորը գերազանցում և նրա ինչական արժեքից:

§ 41. Այնպիսի վայրերում, վորոնք ապահով են հայտա-

րարժան անասունների և թռչունների վարակիչ հիվանդությունների տեսակետից, տվյալ վարակիչ հիվանդություններին յեթեթակա անասուններ և թռչուններ կամավոր ապահովագրության բնգուցելը չի բույլատրվում: Սակայն, այդ վայրերում մինչև դրանց անապահով հայտարարելն արդեն իսկ կնքված ապահովագրությունները վերանորոգել թույլատրվում է:

§ 42. Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում շենքերի, ձեռնարկությունների, ձկնորսային նավերի, սարքավորման և ինվենտարի գնահատումը կատարվում է դրանց իսկական արժեքով, այսինքն, հաշվի առնելով մաշվածությունը գեղչը (դուրս գալով ամորտիզացիան):

§ 43. Շենքերի իսկական արժեքը վորոշվում է այն գնահատման նորմաների հիման վրա, վորոնք սահմանվում են տվյալ տիպի շենքերի համար պետական տեղական շինարարական կադմակերպությունների կամ շրջնողրաժինների կողմից, ընդվորում, պետք է գեղչ անել շենքի մաշվածության համեմատ:

§ 44. Գյուղատնտեսական մշակույթի բերքի արժեքը վորոշվում է կոլտնտեսության (կոոպերատիվի) շրջնողրաժինի կողմից հաստատված պլանով, այդ մշակույթի պլանային բերքատվության ու պետական մթերման գնի հիման վրա:

Իսկ յեթե տվյալ մշակույթի արտադրանքի համար մթերման գներ չեն սահմանված, ապա պետք է վերցնել տվյալ մշակույթի հիմնական արտադրանքի իրացման պահին տվյալ վայրում գոյություն ունեցող կոնվենցիոն գինը:

Որինակ. — կոլտնտեսությունը ներկայացրել է ապահովագրելու համար 10 հեկտար բամբակ: Նրա արտադրական պլանով միջին բերքատվությունը սահմանված է 6 ցենտ. մեկ հեկտարից, գոյություն ունեցող միջին մթերման գինը 100 ռ. յի մեկ ցենտները:

Այս դեպքում մեկ հեկտար բերքի արժեքը կկազմի  $100 \times 6 = 600$  ռ.: Իսկ  $100$  հեկտ. =  $600 \times 100 = 60.000$  ռ.

§ 45. Կոլտնտեսություններում և սկզբնական կոոպերատիվներում ապահովագրվելիք անասունների արժեքը վորոշվում է տվյալ տիպի անասունի և տեղական կոլտնտեսային շուկայում յեղած տիպի միջին արժեքի հիման վրա, հաշվի առնելով այն մթերային հատկությունները, վոր ունի ապահովագրվող անասունը:

Որինակ. տվյալ տեսակի (կով կամ ձի) և հասակի անասունի միջին արժեքը տեղական կոլտնտեսային շուկայում վորոշվում է 1000 ռ.

ա) ապահովագրվելիք անասունը նույն տեսակի և հասակի յի, ունի հատուկ հատկություններ (կաթնատվություն, անվածություն, ույժ), վորոնք բարձրացնում են նրա արժեքը նույն տեսակի և տիպի միջին անասունների համեմատությամբ 20% -ով: Նման անասունը կարելի յի գնահատել 1200 ռ.:

բ) Իսկ յերբ անասունն, ընդհակառակը, ունի մի այնպիսի թերություն, վորն իջեցնում է նրա արժեքը, նույն տեսակի և տիպի միջին անասունի համեմատությամբ 30% -ով, ապա նման անասունին պետք է գնահատել տվյալ տեսակի և տիպի անասունների միջին արժեքից 30% -ով ավելի ցածր, այսինքն, 700 ռ.:

§ 46. Անասունի կոնվենցիոն արժեքը վորոշվում է նրա կենդանի քաշի և տվյալ վայրի համար սահմանված կենդանի քաշի միավորի (կիլոգրամ) կոնվենցիոն գնի հիման վրա: Ազնվացեղ և մթերային խոշոր յեղձուրավոր անասունների արժեքը վորոշելիս անհրաժեշտ է ոգտվել ԽՍՀՄ Հողժողկոմատի և Խորտնտժողկոմատի 1935 թ. սեպտեմբերի 2-ի հավելումների շկատյով:

Որինակ. կովի կենդանի քաշը 300 կգ. է: Մեկ կիլոգրամ կենդանի քաշի կոնվենցիոն գինը տվյալ վայրում՝ 1 ռ. 50 կոպ., կովի կոնվենցիոն արժեքը կհավասարվի 450 ռ.:

Անասունի կոնվենցիոն արժեքը կարելի յի վորոշել նաև նրա մորթելաքաշի և մեկ կիլոգրամ մսի կոնվենցիոն գնի հիման վրա:

Որինակ. Յեթե միջակ գերություն ունեցող կովի կենդանի քաշը հավասար է 300 կգ., ապա նրա մորթելաքաշը կհավասարի 150 կգ. (50%): Յեթե մեկ կիլոգրամ մսի կոնվենցիոն արժեքը տվյալ վայրում 3 ռ. յի, ապա կովի կոնվենցիոն արժեքը կկազմի 450 ռ.:

§ 47. Գյուղատնտեսական անասունների կենդանի քաշը վորոշվում է կամ կշռելու կամ չափելու միջոցով:

Խոշոր յեղձուրավոր անասունների կենդանի քաշը չափելու միջոցով վորոշում են հետևյալ կերպ՝

Անասունին կանգնեցնում են հարթ տեղում այնպես, վոր-

պեսզի նրա գլուխն ու վիզը ձգված լինեն դեպի առաջ, առջևիկ  
և հետևիկ վտաքերը գրված լինեն զույգ (երար կողքի): Այնու-  
հետև սանտիմետրի բաժանված յերիզով չափում են անասունի  
մարմինը յերկարութամբ հետնաքաշի մեջտեղից մինչև պոչի  
արմատը և կրծքի շրջագիծն անմիջապես թիակներից հետո,  
ստացված թվերը իրար վրա բազմապատկում են և բաժանում  
50-ի վրա: Արդյունքը կլինի անասունի կենդանի քաշը կիլո-  
գրամներով:

Ռեքնակ. — Յենթադրենք, թե կովի մարմնի յերկարությունը  
հավասար է 135 սանտ., իսկ կրծքի շրջագիծը 180 սանտ.: Բազ-  
մապատկելով իրար վրա այդ թվերը կստանանք (135×180)  
24300: Այս թիվը պետք է բաժանել 50-ի վրա: 24300 բաժանե-  
լով 50-ի վրա կստանանք 486: Հետևապես, կովի կենդանի քա-  
շը հավասար է 486 կիլոգրամի:

§ 48. Ապահովագրական հայտարարությունը կազմվում է  
յերկու որինակից: Կոլտնտեսութուններում և սկզբնական կոոպե-  
րատիվներում գույք, ինչպես նաև գյուղատնտեսական անասուն-  
ներ և մշակույթների ցանք ապահովագրելիս հայտարարությանը  
կցվում են ապահովագրվող գույքի ցուցակը, վորոնք նույնպես  
կազմվում են յերկու որինակից, Պետապի Գլխավոր Վարչության  
կողմից սահմանված ձևով:

Ապահովագրական հայտարարության մեջ պետք է նշել՝  
թե ում է պատկանում գույքը՝ ինչպիսի գույք է ապահովագրը-  
վում, նրա քանակը, արժեքը, կամավոր ապահովագրության  
ապահովագրական գումարը, հասանելիք ապահովագրական վճա-  
րումները գումարը և գրանց վճարման ժամկետները:

Յեթե առանձին գյուղատնտեսական անասուններ են ապա-  
հովագրվում և դանազան գումարներով, ապա ցուցակում պետք է  
նշել նրանց առանձնահատկությունները (իսկ ձիերի վերաբեր-  
մամբ նրանց անձնագրերի համարները):

Գյուղատնտեսական մշակույթների ապահովագրության վե-  
րաբերյալ հայտարարությունների մեջ պետք է նշել՝ ինչպիսի  
մշակույթ է կամենում կոլտնտեսությունը կամ կոոպերատիվն  
ապահովագրել, ինչպիսի ցանքային առաջադրություն են տվել  
տնտեսությանը հողային օրգանները, իսկ պտղատու և խաղողի  
այգիներին, մրգաբաններին վերաբերմամբ՝ պալատու տունկերի

ինչպիսի փաստացի տարածություն ունի տնտեսությունը և ինչ-  
պիսի պլանային բերքատվություն է նախատեսված յուրաքան-  
չյուր ապահովագրվելիք մշակույթի համար:

Ապահովագրական հայտարարություն կազմում է ապահովա-  
գրական տեսուչը, իսկ այն դեպքերում, յերբ ապահովագրությու-  
նը կնքում է գյուղխորհուրդը կամ այս հրահանգի § 38-ում հի-  
շատակված անձինք, ապահովագրական հայտարարությունն ու  
ցուցակը կազմում է գյուղխորհուրդը կամ ապահովագրությունն  
կնքելու համար լիազորված անձը, ընդվորում, անասնաբուժը կամ  
այլ մասնագետ, վորը զննում է ապահովագրվող անասուններին,  
պետք է գրավոր յեզրակացություն տա այդ անասուններին  
ապահովագրելը հնարավոր լինելու մասին և վորտղի նրանց ար-  
ժեքը:

Ապահովագրական հայտարարությունն ու ապահովագրվող  
անասունի ցուցակները ստորագրում են անասնատերն ու այն բո-  
լոր անձինք, վորոնք զննել և զնահատել են գույքը:

Ապահովագրական հայտարարության մեկ որինակը (ցուցա-  
կի հետ միասին, յեթե ապահովագրվում է կոլտնտեսության կամ  
սկզբնական կոոպերատիվի գույքը) հանձնվում է ապահովագրվո-  
ղին ապահովագրական վճարումներ կատարելու համար:

§ 49. Այն դեպքերում, յեթե ապահովագրվելիք գյուղա-  
տնտեսական անասունների մեջ հայտարարվում են հիվանդ կամ  
հյուժված անասուններ, ապա նրանց համար կազմվում է առան-  
ձին մանրամասն ցուցակ, ցույց տալով, թե ինչու տվյալ  
անասունները ապահովագրության մեջ չեն ընդունվի:

§ 50. Յեթե գույքը զննված է և ապահովագրվողին ուղարկ-  
ված կամ հանձնված է ծանուցագիր (ապահովագրական հայտա-  
րարություն) ապահովագրական վճարումներ կատարելու մասին,  
բայց առաջին մուծանքը ապահովագրվողը 10 օրվա ընթացքում  
չի կատարել, ապա ապահովագրությունը համարվում է չկնքված  
և նոր ապահովագրություն կնքելու համար անհրաժեշտ է ապա-  
հովագրվող ամբողջ գույքի (բացի ցանքերից) կրկնակի զննու-  
թյուն կատարել, իսկ յեթե գույքի կազմի մեջ փոփոխություն-  
ներ են տեղի ունեցել, ապա նաև զնահատել:

## ԱՂԱՅՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՒՅԲԻ ՎՐԱ ՀՍԿԵԼ

§ 51. Կամավոր կարգով ապահովագրված գույքը շրջանային ապահովագրական տեսչությունների հատուկ և մշտական հսկողություն տակ պետք է գտնվի:

Շրջապատեսչները պարտավոր են ինչպես անձամբ, նույնպես և դյուղական և կոլտնտեսային հասարակայնությունն այդ գործին մասնակցեց անելու միջոցով սխտեմատիկորեն ստուգել ապահովագրված գույքի վիճակը՝ անվտանգություն, պաշտպանություն, ղեկի աշխատանքի վերաբերմունք ունենալու տեսակետից:

Յեթե հայտարարվում են անտնտեսվարություն կամ ապահովագրված գույքին սպառնացող այլ յերելություններ, ապա տեսուչը պարտավոր է գրավոր առաջարկել ապահովագրվողին ամենակարճ ժամկետում վերացնելու նկատված թերությունները և նախադրուշացնել նրան, վոր այդ առաջարկները չկատարելու դեպքում նրա գույքը կվերցվի ապահովագրական պատասխանատվությունից:

Պատասխանատվությունից վերցնելու մասին նախադրուշացնում են, պատասխանատվությունից վերցնում ու ապահովագրությունը վերականգնում են նույն որդաններն և նույն կարգով, ինչ վոր պարտադիր կոպարային ապահովագրության դեպքում:

Յեթե կամավոր կարգով ապահովագրված գույքը վերցվում է պատասխանատվությունից (և ապահովագրությունը վոչնչացվում է), ապա ապահովագրվողին պետք է վերադարձնել մինչև ապահովագրության ժամկետի վերջը հասանելիք ապահովագրական վճարումների մասը: Ապահովագրական վճարումները պետք է վերադարձնել մինչև ապահովագրության ժամկետը մնացած ամիսների հաշվով, ընդվորում վոչ լրիվ ամիսները նկատի չպետք է առնել:

## ՎՆԱՍՆԵՐԻ ԼՈՒԾԱՐԲԸ

§ 52. Կամավոր ապահովագրության վնասների լուծարքը կատարվում է նույն կարգով և նույն հիմունքներով, ինչ վոր կոպարային ապահովագրության վնասների լուծարքը:

§ 53. Կամավոր կարգով ապահովագրված գույքին պատճառած վնասների զիմաց արվող ապահովագրական վարձատրու-

թյունը վորոշվում է նույն հիմունքներով, ինչ վոր պարտադիր կոպարային ապահովագրության վերաբերմամբ, բացառությամբ ապահովագրված գյուղատնտեսական մշակույթների կրկնացանքի և անասուններ մորթելու դեպքերի:

Յեթե փչացած տարածության վրա կրկնացանք կատարվում է նույն մշակույթով, ապա ապահովագրվողին վճարվում է փչացած սերմացուի արժեքն ու կրկնացանքի աշխատանքների արժեքը:

Յեթե ըստ տարվա յեղանակի նույն մշակույթով կրկնացանք կատարելն անհնար է լինում և այդպիսին կատարվում է մի այլ, ավելի քիչ արժեքավոր մշակույթով, որինակ, բամբակը կրկնացանվում է կորեկով, ապա ապահովագրվողին վճարվում է փչացած մշակույթի ապահովագրության գումարի և նորացան մշակույթի վերջին ընդհանուր յեկամաի միջև յեղած տարբերությունը: Այդ վերջինի ընդհանուր յեկամուտը վորոշվում է պաշտպան ընդհանուր վերաբերյալ տվյալների հիման վրա, կայուն միջերման գներով:

Որինակ, բամբակը կոպարային կարգով ապահովագրված է 220 ու և լրացուցիչ կերպով գերկոպարային կարգով՝ 600 ու. ընդամենը 820 ու. մեկ հեկտարը: Բամբակ վչացել է և կրկնացանվել կորեկով, վորի ընդհանուր յեկամուտն է 50 ու. մեկ հեկտ.: Տվյալ դեպքում ապահովագրական վարձատրությունը կհավասարի 820 ու.—50.—=770 ու.

§ 54. Այն դեպքերում, յերբ անասնաբուժական հսկողության կարգադրությամբ մորթված անասունի միսը պիտանի չէ լինում գործածության համար, ապահովագրական վարձատրությունը վճարվում է ապահովագրական գումարի չափով:

Յեթե անասնաբուժական հսկողության կարգադրությամբ մորթված անասունի միսը պիտանի յե ճանաչվում գործածության համար և ապահովագրվողը կոնվենցիոն գներով հանձնում է այն միջերոգ կազմակերպություններին, ապա նրան վճարվում է ապահովագրական գումարի և մի համար ստացված գումարի տարբերությունը:

Յեթե մորթած անասունի միսը գործածվում է սեփական հորիքների համար կամ վաճառվում է ազատ շուկայում, ապա ապահովագրական վարձատրություն տրվում է ապահովագրական գումարի (պարտադիր և գերկոպարային ապահովագրու-

թյան) և մսի արժեքի (շուկայի գներով) միջև յեղած տարբերության չափով:

Մսի արժեքը կոնվենցիոն գներով հաշվարկելու համար ապահովագրվող պետք է ներկայացնի մթերման օրգանի տեղեկանքը: Այդպիսի տեղեկանք չներկայացնելու դեպքում մսի արժեքը վորոշվում է կոլտնտեսային շուկայի գներով անկախ այն քանից, թե վորքան է ստացել ապահովագրվողը մսի վաճառքից:

Որինակ.— Կովը, վորն ապահովագրված է 1000 ո. (կայուն նորմա պլյուս կամավոր ապահովագրություն), միջակասուն է, ունի 300 կ.գ. կենդանի քաշ, մորթված է անասնաբուժական հսկողության կարգադրությամբ տվյալ վայրում անասունների հիվանդության բնույթը վորոշելու համար: Կովի միսը թույլ է արված գործածելու: Մորթելուց հետո ստացվել է 150 կգ. միս: Մսի կոնվենցիոն արժեքը տվյալ վայրում 3 ուերլի յե կիրոգրամը, իսկ կոլտնտեսային շուկայում՝ 6 ուերլի:

ա) Յեթե միտն ապահովագրվողը հանձնել է մթերող կազմակերպություններին կոնվենցիոն գներով և ստացել 450 ո., ապա նրան պետք է վճարել 550 ո. (1000—450):

բ) Յեթե միտն ապահովագրվողը վաճառել է կոլտնտեսային շուկայում և ստացել 900 ո., ապա նրան պետք է վճարել 100 ո. (1000—900):

գ) Իսկ յեթե միսը կոլտնտեսային շուկայում արժե վոշ թե 6 ո. այլ 6 ո. 75 կ. և ապահովագրվողը միսը վաճառել է 1012 ուեր. 50 կոպ., ապա նրան ապահովագրական վարձատրություն չպետք է տար:

Ծանոթություն: Այն վայրերում, վորտեղ ձիու միս չեն գործածում և հետևապես մորթված ձիու միսն օգտագործել չի կարելի, ապահովագրական վարձատրությունը վճարվում է լրիվ գումարով:

§ 55. Բոլոր դեպքերում կամավոր գերկոպարային ապահովագրության ապահովագրական վարձատրությունը չի կարող ապահովագրվողի իսկական վնասների չափից ավելի բարձր լինել:

Ծանոթություն: Գյուղատնտեսական անասունների ապահովագրության վնասների չափը սահմանելիս սատկած անասունի արժեքը վորոշվում է վոշ թե անասունի՝ սատկելու օրվա արժեքի հիման վրա, այլ նրա արժեքով առողջ գրությամբ:

§ 56. Գերկոպարային կամ կամավոր կարգով ապահովագրված գյուղատնտեսական անասունների, թռչունների կամ մեղուների յուրաքանչյուր անկման, ինչպես նաև գյուղատնտեսական մշակույթներ փչանալու յուրաքանչյուր դեպքում շրջանային ապահովագրական տեսուչը կամ գյուղական ապահովագրական հանձնաժողովը, վորը գյուղատնտեսական անասունների անկման մասին ակտ է կադմում, պետք է պարզի թե ինչ քանակությամբ գյուղատնտեսական անասուններ (ընդհանուր տոմամբ, յեթե ապահովագրված են բոլոր անասունները կամ արվյալ տիպի—յեթե ապահովագրված է դրանց մի մասը միայն), ինչպես նաև գյուղատնտեսական մշակույթների ինչպիսի տարածություն և մնացել առ ապահովագրական դեպքի օրը: Յեթե կպարզվի, վոր անասունների, թռչունների կամ մեղուների քանակը կամ գյուղատնտեսական մշակույթների ցանքի տարածությունն ավելի մեծ է, քան ապահովագրվածը և լրացուցիչ ապահովագրություն չի կնքված (բացի այն դեպքերից, յերբ ապահովագրվում են առանձին, ապահովագրական հայտարարության մեջ կամ ցուցակում հատուկ նշված, գյուղատնտեսական անասուններ), ապա ապահովագրական վարձատրության հաշվարկն յուրաքանչյուր ապահովագրված միավորի համար կատարվում է այսպիս՝ ապահովագրական գումարը, վորով ապահովագրված են տվյալ տեսակի կամ սեռի անասուններ ըբժանվում է ապահովագրական դեպքի օրվա նրանց քանակի վրա, ինչպես նաև տվյալ գյուղատնտեսական մշակույթի ցանքի հետաքննելի թվի վրա:

Որինակ 1. կոլտնտեսությունն ապահովագրել է 50 կով առանց ցույց տալու նրանց նշանները և 30.000 ո. ընդհանուր ապահովագրական գումարով, այսինքն, միջին հաշվով 600 ուեր. յուրաքանչյուրը: Մեկ կովի անկման կապակցությամբ առաջացած վնասը լուծարելու ժամանակ պարզվել է, վոր կոլտնտեսությունն ունի 60 կով: Այդ 10 կովի մասին կոլտնտեսությունը շրջապատնշությանը չի հայտնել և նրանց լրացուցիչ կերպով չի ապահովագրել: Հետևյալիս սատկած կովի համար կարելի յե վճարել վոշ թե 600 ո., այլ 500 ո. միայն, այսինքն, 30.000 ուեր. բաժանած 60-ի վրա:

Որինակ 2. կոլտնտեսությունն ապահովագրել է 200 հեկտ. բամբակ, 600 ո. հեկտ. կամ 120.000 ո. ընդհանուր գումարով:

Յանքի փաստացի տարածությունն և 225 հեկտ., լրացուցիչ 25 հեկտ. մասին կոլտնտեսությունը չի հայտնել և լրացուցիչ կերպով չի ապահովագրել: Այս դեպքում Պետապի պատասխանատվությունը մեկ հեկտարի համար կկազմի 120.000 բաժանած 225 վրա = 533 ո.: Իերքը մասնակի կերպով վնասվելու դեպքում վճարվում և այդ գումարի մի մասը միայն:

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐՆԼՈՒ, ՎՃԱ-  
ՐՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՅՎԻ ԱՌՆԵԼՈՒ  
ԳԱՐԳԸ**

§ 57. Ապահովագրական վճարումներ կամավոր ապահովագրության համար կոլտնտեսությունները մուծում են Պետքանկ իրենց ընթացիկ հաշիվներեց փոխանցելու միջոցով կամ ապահովագրական տեսչության ընթացիկ հաշիվին կանխիկ գրամ մուծումներով միջոցով, իսկ կոլտնտեսականներն ու մենատնտեսները՝ գյուղխորհրդի գանձապահին կամ նրա պարտականությունները կատարող անձին կանխիկ գրամ մուծելու միջոցով:

§ 58. Կոլտնտեսություններն ու ակղբնական կոոպերատիվներն անդրամ հաշվարկի կարգով ապահովագրական վճարումներ կատարելիս Պետքանկի բաժանմունքին ներկայացնում են հրաման յերեք որինակից, վորի մեջ պետք է նշված լինի, թե ինչի համար են կատարվում վճարումները և դրանց գումարը: Հրամանի մեկ որինակը (ապահովագրական վճարումներ կատարելու վերաբերյալ նշումով) Պետքանկը վերադարձնում և կոլտնտեսությանը (կոոպերատիվին), յերկրորդ որինակն ուղարկում և շրջապատելությանը, իսկ յերրորդը թողնում իր մոտ:

§ 59. Ապահովագրական վճարումներ կատարելիս կոլտնտեսականներն ու մենատնտեսները պետք է ներկայացնեն ապահովագրական հայտարարություն:

Պահանջված ժամկետից հետո վճարումներ ընդունել չի թույլատրվում:

§ 60. Յուրաքանչյուր անդամ կամավոր ապահովագրության վճարումներ կատարելիս ապահովագրվողներին ԽՍՀՄ Պետապի Գլխավոր վարչության կողմից սահմանված հատուկ ձևի

անդորրագրեր են տրվում, վորոնց մեջ պետք է անպայման ցույց տրված լինի թե վոր գույքի համար են ընդունված կամավոր ապահովագրության վճարումները: Անդորրագրերը դուրս են գրվում վում յերկու որինակից, վորից մեկը տրվում է ապահովագրվողին, յերկրորդն ուղարկվում է շրջանային ապահովագրական տեսչությանը, իսկ յերրորդը (արմատը) մնում և այն հիմնարկի գործերում, վորը վճարումներ և ընդունել:

Անդորրագրերի յերկրորդ որինակներն ուղարկվում են շրջանային ապահովագրական տեսչությանը ամսական 3 անգամ յուրաքանչյուր ամսվա 1, 11 և 21-ին:

§ 61. Ապահովագրվողները պետք է պահեն իրենց մոտ ապահովագրական հայտարարություն-ցուցակները, ինչպես նաև ապահովագրական վճարումներ կատարելու վերաբերյալ անդորրագրերը և ներկայացնեն ապահովագրական տեսչին ապահովագրված գույքը վնասվելու դեպքում:

§ 62. Կամավոր ապահովագրության վճարումներ Պետքանկի ֆիլիալներն ու մտից—յելից դրամարկիցները և գյուղխորհուրդները հաշվի յեն առնում առանձին որագրում՝ դրամական մուծումների ցուցակում (գյուղխորհրդի հաշվառման քարտի № 23 ձև):

Իրամը Պետքանկ—ինայդրամարկը կանձնելու վերաբերյալ սեղեկցող տեղեկագրերով գյուղխորհուրդը կամավոր ապահովագրության ապահովագրական վճարումների գումարը ցույց և ապիս առանձին:

§ 63. Կամավոր ապահովագրության վճարումների կատարման հաշվառումն ու մուծանքների ժամկետների հսկողությունն ապահովագրական տեսուչն իրագործում և ըստ ապահովագրական հայտարարությունների, յուրաքանչյուր կոլտնտեսության, կոլտնտեսականի ու մենատնտեսի համար առանձին: Իրա համար շրջապատելու, անդորրագրերի յերկրորդ որինակներն, ինչպես նաև դրամ վճարելու վերաբերյալ կոլտնտեսության հրամաններն ստանալուց հետո, դրանցում և ապահովագրական հայտարարությունների մեջ իր ստացած վճարումների ամբողջ գումարները:

§ 64. Կամավոր ապահովագրություն Պետապի որդաններն անց են կացնում կատարյալ կամավորության հիման վրա: Կա-

մալուխի մասին սկզբունքի յուրաքանչյուր խախտման դեպքը  
պետք է անմիջապես խափանել և մեղավորներին պատասխանա-  
տվութեան յենթարկել:

Կատեգորիկ կերպով արգելվում է կամավոր ապահովագրու-  
թեան վճարումները պարտադիր կողարային ապահովագրութեան  
ապահովագրական ծանուցագրերի մեջ մտցնելը:

Սյո հրահանգն ուժի մեջ է մտնում 1936 թ. ոգոստոսի 1-ից:

ԽՍՀՄ ՊԵՏԱՊԻ ԳԼԽԱՎՈՐ

Վ.Ս.ԲՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ ԱՐԱԼՈՎ

ՀՀ Ազգային գրադարան



NL0937831



4 ЯНВ. 1957

ФНЛС 25 ЧЛМ.

5

11

28567

30

## ИНСТРУКЦИЯ № 531

о порядке проведения добровольного страхования  
в сельских местностях и городах